

ԴԱՏԱՎՃԻՌ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ ՊԵՏՔ Է ՂԵԿԱՎԱՐՎԵԼ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ, ՇՐՋԱՀԱՅԱՑՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԳԹԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ: ՄԱՔԻԱՎԵԼԻ

Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրը դեռևս համարվում է ամենահրատապ լուծումներ պահանջող խնդիրներից մեկը: ՀՀ քաղաքացին պետք է վստահ լինի, որ ՀՀ դատարանները իրականացնում են արդարադատություն, և նա յուրաքանչյուր վայրկյան, իր իրավունքների պաշտպանության նպատակով, կարող է ապավինել հայրենի արդարադատությանը: Իրականում, այսօր ՀՀ դատական համակարգը խորքային բարեփոխումների կարիք ունի: Բարեփոխումներ, որոնք մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացու համար կբերեն հույս, վստահություն ու հավատ: Իսկ այդպիսի բարեփոխումներին թարմ շունչ և ոգի կարող են հաղորդել միայն նոր սերնդի իրավաբանները, ովքեր ունեն մասնագիտական բարձր որակավորում, բարոյական անխոցելի նկարագիր և համապատասխան կամք՝ մեր երկրի դատաիրավական համակարգի առողջացման նպատակով իրականացնելու անշրջելի բարեփոխումներ: Այս ամենի հետ մեկտեղ ՀՀ քաղաքացին կարիք ունի նաև մարդու իրավունքների պաշտպանության հաջողված օրինակների, օրինակներ, որոնք, իր իրավունքների համար պայքարի և խախտված իրավունքների վերականգնման գործում քաղաքացուն հավատ, հույս և եռանդ կներշնչեն: Այդպիսի օրինակներից մեկը կարող է հանդիսանալ «ԱրմենՏել» ընկերու-



թյան մի խումբ աշխատակիցների նախազգուշական գործադուլի իրականացման հետ կապված սեփական իրավունքների պաշտպանության համար երկարատև պայքարը: Պայքար, որը անշուշտ պասկվելու է հաղթանակով, քանզի այն ճշմարիտ է և արդար: Մանրամասները՝ էջ 2-3-ում:

ԼՐԱՅՈՍ

ՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Իրավաբանական լրատուն հարցազրույց է անցկացրել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԱԱ թղթակից-անդամ Գագիկ Ղազինյանի հետ: Հարցազրույցը՝ էջ 4-5-ում:

ԴԱՏԱՎՃԻՐ

Հունգարիայի Վերաքննիչ դատարանը 2007թ.-ի փետրվարի 22-ին անվիճելի է բողոք առաջին ատյանի դատավճիռը, ըստ որի, Մաֆարովը դատապարտվել էր ցմահ ազատազրկման: Հայ սպային կացնահարած մարդասպան Ռամիլ Մաֆարովն այսուհետ պատիժը պետք է կրի Հունգարիայի խիստ ռեժիմի գաղութում: Վերաքննիչ դատարանում գործը քննել է դատավոր Պիրոշկա Կարպատը: Ադրբեջանական կողմը իրավունք ունի ութ օրվա ընթացքում բողոք ներկայացնել Հունգարիայի Գերագույն դատարան:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն 2007թ.-ի փետրվարի 12-ին ընդունեց Հայաստանում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Բոյանա Ուրունովային և Եվրոպայի խորհրդի հակակոռուպցիոն հարցերով փորձագետ Մարիանա Տրիվունովիցին: ՀՀ գլխավոր դատախազը հյուրերին տեղեկացրել է, որ աշխատանքներ են տարվում կոռուպցիոն երևույթները դատախազության համակարգում բացառելու, անբարեխիղճ աշխատակիցներին համակարգից ազատելու և դատախազությունը երիտասարդ, բանիմաց անձանցով համալրելու ուղղությամբ: Մասնավորապես, «Գատախազության մասին» ՀՀ նոր օրենքով նախատեսվել է ունենալ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի և որակավորման հանձնաժողովներ:

ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

ՀՀ Նախագահ Ռոբերտ Բոչարյանը, հիմք ընդունելով Արդարադատության խորհրդի 2007 թվականի հունվարի 31-ի «Գատախազների թեկնածությունների 2007 թվականի ցուցակի մասին» որոշումը, և, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 1-ին կետով, հրամանագիր է ստորագրել դատավորների թեկնածուների 2007 թվականի ցուցակը հաստատելու մասին: ՀՀ Նախագահը նույն օրվա մեկ այլ հրամանագրով հաստատել է դատավորների ծառայողական առաջխաղացման 2007 թվականի ցուցակը:

ՍԴ ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ

ՀՀ Սահմանադրական դատարան 2006թ.-ին մուտքագրվել է ՍԳ դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների 287 դիմում, այդ թվում՝ ՀՀ նախագահի 47 դիմում, որից 46-ն ընդունվել է քննության: Ֆիզիկական անձանցից ստացվել է 221 դիմում, որոնց մոտ 90 տոկոսը ՍԳ-ն քննության չի ընդունել, որովհետև դրանք չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի և ՍԳ կանոնակարգի դրույթներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին: Անհատական դիմումների ընդհանուր վիճակագրության վերլուծությունը վկայում է, որ դրանց միայն 9,9 տոկոսն է օրենքի նորմի սահմանադրականության հարցերին առնչվում: Չորս դիմումների հիման վրա իրավական ակտերի վիճարկվող դրույթները ճանաչվել են հակասահմանադրական:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՏԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՄՈՒՑՈՂԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ

ՆԱԽԱՊԱՏՈՒԹՅՈՒՆ

2005թ. նոյեմբերի 7-ին «ԱրմենՏել» ընկերության մի խումբ աշխատակիցներ իրենց տնտեսական, սոցիալական, աշխատանքային, մասնագիտական իրավունքների պաշտպանության համար գրավոր պահանջագիր էին ներկայացրել «ԱրմենՏել» ընկերության գործադիր գլխավոր տնօրենին: Պահանջագրին կցվել էին նաև «ԱրմենՏել» ընկերության ԻՏ գլխավոր տնօրինության համապատասխան բաժինների աշխատողների կայացրած որոշումների պատճենները, որոնցով նախատեսվում էր նույն թվականի նոյեմբերի 17-ին, ժամը 10:00-ին անցկացնել նախազգուշական գործադուլ: Նախազգուշական գործադուլային ակցիան իրականացվել է քայլերթի տեսքով՝ մինչև ընկերության վարչական շենքը և տեղ է մտն անց ժամ տասնհինգ րոպե: Նախազգուշական գործադուլային ակցիայի նպատակն է եղել չ՛հ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով հաշտարար առաքելություն և հաշտեցման հանձնաժողովի ստեղծման առաջարկի ներկայացում «ԱրմենՏել» ընկերության ղեկավարությանը: Ակցիայի մասնակիցների բերանները եղել են կապած կարմիր ժապավենով, որի նպատակն էր ցույց տալ հանրությունը, որ խախտվում է խոսքի ազատության իրավունքը, և արտահատված կարծիքների և մտքերի համար աշխատակիցները ենթարկվում են հետապնդման:

ՎԵՏԵՎԱՆՔՆԵՐ

Նախազգուշական գործադուլի իրականացման օրը՝ ժամը 17.00-ի սահմաններում, նախազգուշական գործադուլ իրականացրած անձինք, ստանալով Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի ծանուցագիրը, տեղեկանում են, որ «ԱրմենՏել» ընկերությունը հայց է ներկայացրել դատարան՝ գործադուլն անօրինական ճանաչելու պահանջի մասին: «ԱրմենՏել» ընկերության հայցադիմումը վարույթ էր ընդունվել, և գործի քննությունը նշանակվել էր հաջորդ օրը՝ 2005թ.-ի նոյեմբերի 18-ին՝ ժամը 10.00-ին: Հայցադիմումում «ԱրմենՏել» ընկերության իրավաբանները բառացիորեն նշել էին հետևյալ սպառնալիքը. «... Վերը նշվածը թույլ է տալիս պնդելու, որ ԻՏ գլխավոր տնօրինության աշխատակիցների կողմից ձեռնարկվող գործադուլի իրականացումը չի բխում չ՛հ Սահմանադրության և մյուս օրենքների պահանջներից և դատարանի կողմից անօրինական ճանաչվելու դեպքում կարող է հիմք հանդիսանալ դրա մասնակիցներին աշխատանքից ազատելու համար...», որը չմնաց միայն թղթի վրա, այլ իրականում ի կատար ածվեց:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Չունենալով անհրաժեշտ իրավաբանական գիտելիքներ՝ «ԱրմենՏել»-ի աշխատակիցները դիմեցին «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը (ՀԵԻԱ)՝ խնդրելով իրենց տրամադրել համապատասխան իրավաբանական օգնություն: ՀԵԻԱ-ն բավարարեց «ԱրմենՏել»-ի աշխատակիցների խնդրանքը և նրանց տրամադրեց իրավաբաններ՝ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանում նախազգուշական գործադուլն իրականացրած անձանց իրավունքները անվճար հիմունքներով ներկայացնելու համար: Բացի այդ՝ պայմանավորվածություն ձեռք բերվեց այն մասին, որ այսուհետ բոլոր անհրաժեշտ հարցերում ՀԵԻԱ-ն նախազգուշական գործադուլն իրականացրած անձանց կցուցաբերի իրավաբանական, այդ թվում՝ փաստաբանական օգնություն: ՀԵԻԱ-ի կողմից գործի համակարգող նշանակվեց բարձր մասնագիտական կարողությունների և բարոյական նկարագրի տեր երիտասարդ փաստաբան Լիանա Հարությունյանը, ով մինչև այսօր պրոֆեսիոնալ մակարդակով և իրեն հատուկ մարդկային հոգատարությամբ իրականացնում է իր առջև դրված դժվարին առաջադրանքը, որի իրականացմանը նաև օժանդակում են ՀԵԻԱ-ի իրավաբաններ Գևորգ Գյոզալյանը և Արփիին Եղիկյանը:

«ՎԱԿԱՏ» ԱՐՎԵՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2005թ.-ի նոյեմբերի 17-ին նախազգուշական գործադուլն իրականացրած աշխատակիցների հանդեպ սկսվեցին կիրառվել մասսայական հետապնդումներ, մասնավորապես, հնչեցին աշխատանքից մասսայական ազատելու անթաքույց սպառնալիքներ, սկսվեց «ԱրմենՏել» ընդդեմ նախազգուշական գործադուլ իրականացրած աշխատակիցների՝ դատական պրոցեսը, սկսվեց «անհնազանդ» ստորաբաժանումների ղեկավարների աշխատանքից ազատման գործընթացը: Արդեն տեղի ունեցած և ապագայում սպասվող հետապնդումներին որևէ կերպ դիմակայելու

համար ՀԵԻԱ-ի խորհրդով և իրավական աջակցությամբ 2005թ.-ի նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ հիմնադիր ժողով, որտեղ որոշվեց հիմնել «ԱրմենՏելի» աշխատակիցների նոր՝ «Հավատ» արհեստակցական կազմակերպությունը: Արհմիություն, որն, ի տարբերություն գոյություն ունեցողի, կպաշտպանի աշխատակցի շահերը: 2005թ.-ի դեկտեմբերի 13-ին պետական գրանցում ստացավ «Հավատ» արհեստակցական կազմակերպությունը, որն «ԱրմենՏել» ընկերությունում իր գործունեության մասին դեկտեմբերի 19-ին հայտարարեց Հայաստանի հանրային ռադիոյի եթերում:

ԳՈՐԾԻ ԸՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԱՍՏԻՃԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՎԱՍԿԱՐԳՈՒՄ

2005թ.-ի նոյեմբերի 18-ին Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը վճռեց «ԱրմենՏել» ընկերության հայցը բավարարել և 2005թ.-ի նոյեմբերի 7-ին հայտարարված նախազգուշական գործադուլը ճանաչել անօրինական:

2006թ.-ի փետրվարի 8-ին չ՛հ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը կրկին վճռեց «ԱրմենՏել» ընկերության հայցը բավարարել և 2005թ.-ի նոյեմբերի 7-ին հայտարարած նախազգուշական գործադուլը ճանաչել անօրինական:

2006թ.-ի ապրիլի 21-ին չ՛հ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատը որոշել էր չ՛հ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ.-ի փետրվարի 8-ի վճիռը թողնել անփոփոխ, իսկ 2006թ.-ի փետրվարի 22-ին նախազգուշական գործադուլն իրականացրած անձանց անունից ՀԵԻԱ-ի փաստաբանի կողմից բերված վճռաբեկ բողոքն՝ առանց բավարարման:

ԱՌԱՋԻՆ ՎԱԴԹԱՆԱԿՆԵՐԸ

Չապասելով նույնիսկ նախազգուշական գործադուլի գործով վերջնական դատական ակտի կայացմանը՝ աշխատանքից անօրինական կերպով ազատվեցին նախազգուշական գործադուլը իրականացրած «ԱրմենՏել» ընկերության երկու





բաժինների ղեկավարները. 2005թ.-ի նոյեմբերի 23-ին Անդրանիկ Դուկասյանը և նույն քվականի ղեկտնների 9-ին Արմեն Աբրահամյանը, որոնց խախտված իրավունքները դատական կարգով վերականգնվեցին ՀԵԻԱ-ի կողմից կատարված հետևողական և ցիվիլիզացիոն աշխատանքի շնորհիվ: Նախագուշական գործադրույի մեկ այլ մասնակից Միսակ Սիմոնյանը 2006թ.-ի հոկտեմբերի 16-ին նույնպես անօրինական կերպով ազատվեց աշխատանքից և նույն քվականի ղեկտնների 16-ին, ՀԵԻԱ-ի օգնությամբ, համապատասխան հայց ներկայացրեց դատարան: «ԱրմենՏել» ընկերության ղեկավարության հետ կայացած բանակցությունների արդյունքում Միսակ Սիմոնյանը 2007թ.-ի դեկտեմբերի 26-ին իր կողմից ներկայացված հայցը հետ վերցրեց դատարանից և վերականգնվեց իր նախկին աշխատանքում: Ուրախալի է, որ ներկայումս Անդրանիկ Դուկասյանը, Արմեն Աբրահամյանը և Միսակ Սիմոնյանը նույն եռանդով շարունակում են իրենց ամբողջ ներուժը ներդրել գործընկերների հետ սկսած ընդհանուր գործը հաղթական ավարտին հասցնելու համար:

ՇԱՀԱՏԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

2006թ.-ի հոկտեմբերի 18-ին նախագուշական գործադրույ իրականացրած «ԱրմենՏել» ընկերության աշխատակիցներ Հ.Խառատյանի, Ա.Դուկասյանի, Ա.Աբրահամյանի անունից ՀԵԻԱ-ի փաստաբան Լիանա Հարությունյանի կողմից դիմում ներկայացվեց ՀՀ Սահմանադրական դատարան, որով վիճարկվում էր վերջնական դատական ատյանի՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կիրառված ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածի սահմանադրականությունը: Դիմումն ընդունվեց վարույթ և ՀՀ Սահմանադրական դատարանը 2007թ.-ի փետրվարի 6-ին որոշում կայացրեց դիմումը բավարարել՝ ճանաչել հակասահմանադրական և անվավեր ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածի վիճարկվող դրույթը, 75-րդ հոդվածի 3-րդ մասը, 60-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «... իսկ գործադրույ կազմակերպելն արգելվում է» դրույթը:

ՇԱՀԱՏԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը հիմք է, որպեսզի նոր հանգամանքներով վերանայվի 2006թ.-ի ապրիլի 21-ին ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի կողմից կայացված հայտնի որոշումը, որով ՀՀ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ.-ի փետրվարի 8-ի վճիռը թողնվել էր անփոփոխ, իսկ 2006թ.-ի փետրվարի 22-ին նախագուշական գործադրույն իրականացրած անձանց անունից ՀԵԻԱ-ի փաստաբանի կողմից բերված վճռաբեկ բողոքն՝ առանց բավարարման, քանի որ Վճռաբեկ դատարանը իր որոշման պատճառաբանական մասում նշել էր. «նման պայմաններում դատարանը գտավ, որ գործադրույը հայտարարվել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 73, 74 հոդվածների պահանջների խախտմամբ», իսկ Սահմանադրական դատարանը 2007թ.-ի փետրվարի 6-ի իր որոշմամբ հակասահմանադրական և անվավեր է ճանաչել ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածի վիճարկվող դրույթը, 75-րդ հոդվածի 3-րդ մասը, 60-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «... իսկ գործադրույ կազմակերպելն արգելվում է» դրույթը: Շուտով ՀԵԻԱ-ի օգնությամբ նախագուշական գործադրույ իրականացրած անձինք կդիմեն ՀՀ Վճռաբեկ դատարան՝ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի կողմից կայացված 2006թ.-ի

ապրիլի 21-ի որոշումը նոր հանգամանքներով վերանայելու պահանջով:

ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

2006թ.-ի հոկտեմբերի 18-ին նախագուշական գործադրույ իրականացրած «ԱրմենՏել» ընկերության աշխատակիցներ Հ.Խառատյանը, Ա.Դուկասյանը և Ա.Աբրահամյանը, ՀԵԻԱ-ի փաստաբան Լիանա Հարությունյանի օժանդակությամբ, համապատասխան գանգատ են ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Դատարանի կողմից գործը ստացվել է և գործին տրվել է համապատասխան համար:

ՏԱՍԵՐԿՈՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԳՈՐԾ

2006թ.-ի հունիսի 7-ին «ԱրմենՏել» ընկերությունը անօրինական կերպով աշխատանքից ազատեց նախագուշական գործադրույին մասնակցած ևս 12 աշխատակիցների, ովքեր ՀԵԻԱ-ի փաստաբան Լիանա Հարությունյանի օժանդակությամբ հայց ներկայացրեցին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան, որն էլ 2006թ.-ի օգոստոսի 3-ին վճռեց մերժել բոլոր հայցվորների հայցը: Բնականաբար, այդ վճիռը բողոքարկվեց երկրորդ ատյան, որն էլ 2006թ.-ի նոյեմբերի 16-ին վճռեց քաղաքացիական գործն ըստ հայցի Ա.Թորոսյանի, Ա.Բոյնագրյանի, Գ.Ղարազոյանի, Ա.Աֆյանի, Գ.Մանուկյանի, Վ.Մինասյանի, Ա.Դուկասյանի, Կ.Լևոնյանի, Ա.Գալոյանի, Ն.Անդրեասյանի, Լ.Միրզոյանի, Ս.Գրիգորյանի ընդդեմ «ԱրմենՏել» ընկերության՝ աշխատանքից ազատման հրամանները անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդը վճարելու պահանջների մասին մերժել: Տվյալ գործը ընթացքի մեջ է և մոտ օրերս վերը նշված 12 աշխատակիցները ՀԵԻԱ-ի օգնությամբ պատրաստվում են դիմել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ բողոքարկելու ՀՀ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006թ.-ի նոյեմբերի 16-ի վճիռը:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐՆԵ

2006թ.-ի նոյեմբերի 9-ին «ԱրմենՏել» ընկերությունը անօրինական կերպով աշխատանքից ազատեց նախագուշական գործադրույին կոմիտեի նախագահ, «Հավատ» արհեստակցական կազմակերպության նախագահ Հարություն Խառատյանին, որի կողմից 2006թ.-ի դեկտեմբերի 9-ին հայց էր ներկայացվել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան, որով վիճարկվում էր իր աշխատանքից ազատման հրամանի օրինականությունը: 2007թ.-ի փետրվարի 27-ին Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը հայցը մերժեց: Հարություն Խառատյանը մոտ օրերս պատրաստվում է վերաքննիչ բողոք ներկայացնել: Այս մասին, ինչպես նաև Հարություն Խառատյանի՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանում ունեցած ողիսականի մասին կարող եք կարդալ «Իրավաբանական լրատու»-ի հաջորդ համարներից մեկում:

ՆԱՐԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ՊԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՈՒԱՑՆՈՂ ՉԵՆ

- Պարոն Ղազինյան, ինչպես նաև կզմահատեք ներկայումս իրավաբանական կրթության միջակայքը մեր երկրում: Եվ, ըստ Ձեզ, արդյո՞ք այսօր Հայաստանի իրավաբանական կրթական համակարգը ի վիճակի է պատրաստել մասնագիտական և հոգևոր բարձր կարողությունների և հատկանիշների տեր իրավաբան մասնագետներ, որոնք կարող են իրական և անշրջելի բարեփոխումներ իրականացնել երկրի իրավական համակարգում:

- Այսօր մեր հասարակության մեջ նկատվում է իրավաբանի մասնագիտության սոցիալական նշանակության լուրջ վերազնահատում. այն ներկայումս ամենամեծ պահանջ ունեցող մասնագիտություններից մեկն է: Սակայն, կարծում ենք, այս փաստը մեզանում լուրջ և հիմնավոր կերպով չի զնահատվում ու չի վերլուծվում: Փաստորեն՝ իրավական ոլորտի բարեփոխմանն ուղղված միջոցառումները սահմանափակվում են բացառապես օրենսդրության և իրավաբանական պրակտիկայի վերակառուցմամբ: Պատշաճ ուշադրության չի արժանացել այն հանգամանքը, որ այս ոլորտի բարեփոխումների արդյունավետությունն ուղղակիորեն կապված է հանրապետությունում իրավաբանական կրթության որակից, իրավաբան կադրերի մասնագիտական պատրաստավածության մակարդակից:

Բարձրորակ իրավաբան կադրերի նկատմամբ աճող պահանջարկը խթանեց բազմաթիվ մասնավոր իրավաբանական բարձրագույն ուսումնական հաստատությունների ստեղծումը, որոնց մեծ մասը, պետք է խոստովանել, որպես առաջնային նպատակ դիտում էին շահույթ ստանալը, այլ ոչ թե կրթությունը: Ցավով են նշում, որ առանց նվազագույն պայմանների ապահովման իրավաբաններ պատրաստելու գործին ձեռնամուխ են եղել նաև տնտեսական, գյուղատնտեսական, տեխնիկական պրոֆիլի բարձրագույն ուսումնական հաստատությունները: Նման ուսումնական հաստատություններում չկա անհրաժեշտ ուսումնամեթոդական բազա, բացակայում են որակյալ դասախոսական կադրեր, ինչն էլ լուրջ կասկածների տեղիք է տալիս այնտեղ պատրաստվող իրավաբանների մասնագիտական մակարդակի վերաբերյալ: Եթե սրան էլ ավելացնենք մասնավոր իրավաբանական բուհերի հավատարմագրման գործընթացի թերությունները, ապա պարզ է դառնում, որ նման պարագայում իրավաբանական կրթության վարկաբեկման, ինչպես նաև իրավաբանի մասնագիտության արժեզրկման լուրջ վտանգ է ստեղծվում, ինչն իր հերթին կարող է բացասաբար անդրադառնալ ամբողջ պետական ապարատի բնականոն գործունեության վրա: Այս առումով անհրաժեշտ են նոր մոտեցումներ իրավաբանական կրթության բնագավառում, որոնք պետք է կրեն համակարգված և հետևողական բնույթ և վերջին հաշվով միտված լինեն իրավաբանական կրթության նոր ձևերի և մեթոդների մշակմանը, իրավաբանական կրթության բնույթի ու բովանդակության կատարելագործման հիման վրա որակյալ իրավաբան կադրերի պատրաստմանը, իրավաբանական կրթության ու գիտության կողմնորոշմանը դեպի սոցիալական զարգացման պահանջները: Վերջին հաշվով հենց այս կարևոր խնդիրների լուծմանն է ուղղված մեր ամենօրյա աշխատանքը:

Այս խնդրի լուծման գործում չափազանց կարևոր է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դերը, որը ներկայումս լուրջ վերափոխումների փուլում է գտնվում: Այն առաջնային տեղ է զբաղեցնում մեր հանրապետության համալսարանական կրթության համակարգում և վճռորոշ դեր է խաղում այնպիսի իրավաբան կադրերի պատրաստման գործում, որոնք ի վիճակի կլինեն լուծել նախանշված կարևորագույն խնդիրները:

- Կարո՞ղ եք մատնանշել այն հիմնական խնդիրները, որոնք ներկայումս գոյություն ունեն իրավաբանական կրթական համակարգում, մասնավորապես, Ձեր կողմից ղեկավարվող ֆակուլտետում և, ըստ Ձեզ, որո՞նք են դրանց լուծման ճանապարհները:

- ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը լայն պրոֆիլի իրավաբաններ պատրաստող միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունն է ՀՀ-ում, որն իր գոյության 70-ից ավելի տարիների ընթացքում տվել է ավելի քան 10 000



շրջանավարտ: Հարկ է փաստել, որ այսօր էլ մեր ֆակուլտետի առջև դրված հիմնական խնդիրը մնացել է անփոփոխ, սակայն փոխվել են դրա իրագործման պայմանները: Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում տեղի ունեցող արմատական բարեփոխումների իրավական ապահովման անհրաժեշտությունը պայմանավորեց իրավաբանական կրթության վերակառուցումը և ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող իրավաբանական դպրոցի ստեղծման հրատապությունը: Անցումը ուսուցման եռաստիճան համակարգի (բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա), իր հերթին, պահանջում էր նոր մոտեցումներ իրավաբանական կրթության բնագավառում:

Մեր ֆակուլտետում վերջին տասնամյակում իրականացվել և այսօր էլ իրականացվում են իրավաբանական կրթության արմատական վերափոխմանն ուղղված միջոցառումներ, որոնք միտված են ուսումնական գործընթացի կատարելագործման, պրոֆեսորադասախոսական նոր կադրերի պատրաստման և վերապատրաստման, իրավաբանական ֆակուլտետի՝ որպես գիտական կենտրոնի զարգացման, ինչպես նաև արտերկրի բուհերի իրավաբանական ֆակուլտետների հետ փոխշահավետ համագործակցության ընդլայնման ոլորտի խնդիրների լուծմանը: Որպես օրինակ կարող են վկայակոչել «Աջակցություն եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ու Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի ստեղծմանը ԵՊՀ-ում և աջակցություն գործընկերության և համագործակցության ծրագրին» և «Աջակցություն բարձրագույն իրավաբանական կրթության ոլորտի կայուն բարեփոխումներին» երկարաժամկետ ու ծավալուն ծրագրերը, որոնք, ըստ ամենայնի, նպաստում են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ինտեգրմանը եվրոպական իրավաբանական կրթական համակարգին:

Չնայած զգալի դրական տեղաշարժերին, որոնք արձանագրվել են այս ոլորտներում՝ ներկայումս ֆակուլտետում շարունակվում են աշխատանքները ուսումնական պլանի անընդհատ նորացման և այն հասարակական կյանքի պահանջներին հարմարացնելու, նոր ուսումնամեթոդական գրականություն մշակելու, նոր գիտամանկավարժական կադրեր պատրաստելու ու վերապատրաստելու, ինչպես նաև արտերկրի իրավաբանական դպրոցների հետ կայուն համագործակցություն հաստատելու

ուղղությամբ:

Կարծում են, սրանք այն խնդիրներն են, որոնք կանգնած են ցանկացած ժամանակակից իրավաբանական դպրոցի առջև և որոնց արդյունավետ լուծումից է կախված դրանց վերջնական կայացումը: Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը, մեր համոզմամբ, մեծապես կախված է հիմնական նպատակային խմբի, այսինքն՝ ուսանողների ընտրության մեխանիզմի կատարելությունից: Սակայն մեզանից և ոչ մեկի համար գաղտնիք չէ ուսանողների տարեցտարի արձանագրվող թվաքանակի աճը և, միաժամանակ, որակի անկումը, ինչը գլխավորապես պայմանավորված է ընդունելության գործող կարգով:

- Ըստ Ձեզ, այսօր Հայաստանի իրավաբանական կրթական համակարգը որքանով է ինտեգրացված միջազգային իրավաբանական կրթական համակարգում, որո՞նք են զարգացման միտումները: Եվ այս առումով ի՞նչ հնարավորություններ է ստեղծում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը իրավաբան ուսանողների համար արտասահմանյան բուհերում ուսումը շարունակելու և արտասահմանյան հայտնի իրավաբանական դպրոցներին, թեկուզև կարճ ժակետներով, իրավաբան դասախոսներ ներգրավելու ուղղությամբ:

- Ներկայումս հնարավոր չէ գտնել որևէ բարձրագույն կրթական հաստատություն, որը կարող է գոյություն ունենալ միջազգային կրթական համակարգից դուրս, առանց այլ նմանատիպ հաստատությունների հետ կապ պաշտպանելու: Այս առումով բացառություն չեն կազմում նաև իրավաբանական բուհերը: Միջազգային իրավաբանական կրթական համակարգին մեր հանրապետության իրավաբանական կրթական համակարգի արդյունավետ ինտեգրումը դրա առաջադիմական զարգացման գրավականն է: Գիտակցելով այս գործնի կարևորությունը՝ ֆակուլտետում քայլեր են ձեռնարկվել արտերկրի համալսարանների և իրավաբանական դպրոցների հետ կայուն կապեր հաստատելու ուղղությամբ: Արդյունքում ԱՊՀ մի շարք հանրապետությունների, ԱՄՆ և եվրոպական առանձին երկրների իրավաբանական բուհերի հետ ստեղծվել է գործընկերային ցանց, որը ծառայում է մեր երիտասարդ դասախոսների պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև գիտական համատեղ հետազոտությունների, զանազան ծրագրերի իրականացման գործին:

Ասվածին ավելացնենք նաև, որ բոլորովին վերջերս ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը դարձավ Իրավաբանական ֆակուլտետների եվրոպական ընկերակցության (ELFA) լիիրավ անդամ: Այս հեղինակավոր կազմակերպությունը ներկայումս ունի մոտ 160 անդամ, որոնց թվում են ինչպես ԵՄ անդամ, այնպես էլ ԵՄ անդամ չհանդիսացող պետությունների տարբեր համալսարանների իրավաբանական ֆակուլտետներ: Այսօր Ընկերակցության գործունեության կարևորագույն ուղղությամբ բարձրագույն իրավաբանական կրթության բարեփոխումներն են Եվրոպայում:

- Ինչպե՞ս կցնահատեք ոչ ֆորմալ կրթության ձևերի (օր.՝ Ց, Ձեռնպահի անվան դատախազ մրցույթի, իրավաբան ուսանողների մասնագիտական զանազան գիտաժողովների, մրցույթների) դերը իրավագիտության զարգացման գործում: Որքանով են Հայաստանում զարգացած ոչ ֆորմալ կրթության ձևերը, և ի՞նչ դեր ունի այս ոլորտում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը:

- Միանշանակ՝ դրական: Կարող են ասել, որ կրթության այս ձևերը հնարավորինս ներմուծված են մեր ֆակուլտետի դասավանդման գործընթացի մեջ՝ հաշվի առնելով դրանց՝ որպես գիտելիքի յուրացման արդյունավետ եղանակի կարևորությունը: Մենք ըստ ամենայնի խրախուսում, իսկ հնարավորության դեպքում նաև ֆինանսական և այլ անհրաժեշտ աջակցության միջոցով մեր ուսանողներին հնարավորություն ենք ընձեռում մասնակցել ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակով կազմակերպվող միջոցառումներին: Բացի այդ՝ արդեն

ավանդույթ է դարձել մեր ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվող ամենամյա ուսանողական գիտաժողով-մրցույթը, որին մասնակցելու հրավեր են ստանում բոլոր մյուս պետական և ոչ պետական իրավաբանական բուհերը: Սակայն, որպես կանոն, գիտաժողովին մեր ֆակուլտետի ուսանողների հետ միասին մասնակցում են ևս 4-5 բուհերի ներկայացուցիչներ, որոնք, ափսոսանքով են արձանագրում, չնչին բացառությամբ մեր ուսանողների համար լուրջ մրցակիցներ չեն:

- Այսօր Հայաստանում իրավաբանական կրթական պրոցեսը արդյունավետ կազմակերպելու համար արդյո՞ք հրատարակվում է բավարար չափով հայերեն լեզվով իրավաբանական գրականություն, թե՞ ոչ: Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքով իրավիճակը այս բնագավառում:

- Այսօր արդեն կարող ենք դրական պատասխան տալ նաև այս հարցին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ջանքերով վերջին 6-7 տարիների ընթացքում պատրաստվել և լույս են տեսել իրավունքի իրավունքի բոլոր հիմնական ճյուղերի գծով հայերեն լեզվով դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ, որոնք ժամանակի ընթացքում նաև մի քանի անգամ վերահրատարակվել են: Ներկայումս աշխատանքներ են տարվում նաև գործնական պարապմունքների համար ուսումնաժամողակ գրականություն ստեղծելու (խնդրագրքեր, պրակտիկումներ, քրեստոմատիաներ և այլն) ուղղությամբ: Ի դեպ, կան նաև առաջին արդյունքները:

- Եվ վերջին հարցը. ինչպե՞ս կցնահատեք ներկայումս ՀՀ դատաիրավական համակարգի վիճակը, և ի՞նչ ներդրում ունի և/կամ ի՞նչ կարող է անել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը դատաիրավական համակարգի կատարելագործման գործում:

- Գտնում են, որ դատաիրավական բարեփոխումների արդյունքները գոհացնող չեն: Կարծում են, որ ի սկզբանե իրատեսական չէր այդ բարեփոխումների իրագործման համար նախատեսված եռամյա ժամկետը: Իրականում դա անընդհատ ընթացող, մշտապես իրականացվող գործընթաց է: Ներկա պահին կարելի է խոսել միայն դատաիրավական բարեփոխումների առաջին փուլի ավարտի մասին, որի արդյունքը եղավ այդ բարեփոխումների հիմքը հանդիսացող հիմնական օրենսդրական ակտերի ընդունումը (քաղաքացիական, քրեադատավարական, քաղաքացիադատավարական, դատարանակազմական) և նոր դատական համակարգի ձևավորումը:

Դատաիրավական բարեփոխումների ներկա փուլը, որը սկիզբ առավ սահմանադրական փոփոխություններից հետո, ուղղված է գործող օրենսդրության կատարելագործմանը և նոր օրենսդրության մշակմանը, անկախ դատական իշխանության հիմքերի ամրապնդմանը՝ հասարակության սասանված վստահության վերականգման միջոցով: Այս ամենը նվաճելու համար հարկավոր է երկարատև, լուրջ, հետևողական աշխատանք: Այս գործընթացից ամմասն չէ նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը, որի մասնագետներն ակտիվորեն աշխատում են դատաիրավական բարեփոխումների հիմքը կազմող տարբեր օրենսդրական ակտերի մշակման համար ստեղծված աշխատանքային խմբերում: Բացի դրանից՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մասնագետներն իրականացնում են ՀՀ օրենքների նախագծերի մասնագիտական փորձաքննություն:

ՇՇ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԲՆԱԿԱՆՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՆՈՎԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ



Սահմանադրությամբ իրեն իրավական պետություն հռչակած և ժողովրդավարական զարգացման ուղիով ընթացող Հայաստանի Հանրապետությունում տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային, ինչպես նաև միջազգային-իրավական բազմաթիվ խնդիրների լուծման հետ միաժամանակ անհրաժեշտ է ապահովել օրենքի գերակայությունը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Վերոհիշյալ հարցերի լուծումը հնարավոր է սոցիալական արդարության սկզբունքների գերակայության հաստատմամբ, իրավապահական գործունեության գաղափարայնացմանը և հանրային շահերի պաշտպանությանը գերապատվություն տալու կողմնորոշման վերացմամբ, հանրային և մասնավոր շահերի հավասար պաշտպանվածությամբ: Այս իրավիճակում, իբրև առանձնահատուկ մարմին, պարտավոր է ինքնուրույն դեր է վերապահված Մարդու իրավունքների պաշտպանի (Օմբրդսմեն) հաստատությանը, որը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից անձի իրավունքների պաշտպանության իրական դերակատարություն կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ պետական կառուցակարգում այն հաստատված է որպես իշխանություններից անկախ, քաղաքական, գաղափարական, շահադիտական նախահամոզվածությունից ազատ մարմին:

Մարդու իրավունքների Պաշտպանի ինստիտուտը, լինելով նորույք հայ իրականության մեջ, բնականաբար հեռու է անբերի լինելուց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ունեցած փոխհարաբերություններում, և եղած բացթողումները լուրջ կատարելագործման կարիք ունեն: Հարկ ենք համարում նշել առավել էական մի շարք օրենսդրական հակասություններ՝ կապված «Մարդու իրավունքների Պաշտպանի մասին» ՀՀ օրենքի դրույթների հետ: Նախ և առաջ կարևոր է անձի իրավունքների և ազատությունների ապահովման խնդիրը քրեական գործի վարույթն իրականացնող մարմինների (հետաքննության մարմին, քննիչ, դատախազ, դատարան) կողմից: Նշված ոլորտում նկատելի են զգալի հակասություններ թե՛ օրենսդրության մեջ, թե՛ գործնական աշխատանքում՝ սկսած քրեական գործի հարուցման փուլից մինչև գործի քննությունը ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից: Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրված դիմումների մեջ զգալի թիվ են կազմում այն դիմումները, որոնք վերաբերում են նախնական քննության մարմինների կողմից դիմումատուների պնդմամբ քրեական գործերի հարուցումը մերժելու, ինչպես նաև դրանք չվերացնելու վերաբերյալ դատախազների ու դատարանների որոշումներին: Այս առումով հարկ ենք համարում ներկայացնել գործնական աշխատանքում առաջացող բարդությունները օրենսդրական հակասությունների համատեքստում: Նախ՝ Էր. դատ. օր. 180-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինակաբանությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Դրան հակառակ՝ բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական հետապնդման մարմինների կողմից հաճախակի է խախտվում նշված նորմը: Հաճախ դա պատճառաբանվում է աշխատանքի խիստ ծանրաբեռնվածությամբ, ինչը պատասխանատվությունից ազատելու կամ այն մեղմացնելու միանշանակ հանգամանք չի կարող համարվել: Բացի այդ՝ բողոքների սովոր մասը վերաբերում է դատախազական թույլ հսկողությանը, դրա ոչ պատշաճ իրականացմանը դատախազների կողմից: Որոշակի հակասություններ են առաջանում քրեական վարույթն իրականացնող մարմինների վարույթում գտնվող գործերի վերաբերյալ տեղեկություններ կամ փաստաթղթեր պահանջելու ժամանակ: Մասնավորապես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 6-րդ մասերն իրավազորեցնում են, որ բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանը, բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով, իրավասու է ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատար անձանցից և պետական ծառայողներից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ բողոքի ուսումնասիրության ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, ծանոթանալ բողոքին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի: Դրան հակառակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող

մարմնի թույլտվությամբ: Նույն օրենսգրքի 1-ին հոդվածը արձանագրում է. «Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված վարույթի կարգը պարտադիր է դատարանների, հետաքննության, նախաքննության և դատախազության մարմինների, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար»: Ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին (հոդված 9, 1-ին մաս): «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասն իր հերթին արձանագրում էր, որ դատախազը, քննիչը պարտավոր չեն բացատրություններ տալ իրենց վարույթում գտնվող գործերի, նյութերի վերաբերյալ, ինչպես նաև դրանք տրամադրել ծանոթանալու այլ կերպ, քան օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով: Մեկ այլ հանգամանք ևս. ըստ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Պաշտպանը, բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով, իրավասու է ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական, տնտեսական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատարանի դատավճիռները, վճիռները, որոշումները օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է գործերի հարուցումը: Ինչպես երևում է, օրենքը չի հիշատակում քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու, ինչպես նաև կասեցնելու վերաբերյալ որոշումները մասին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ձևավորված պրակտիկան վկայում է, որ կարճված կամ կասեցված քրեական գործերը պահանջելիս առաջանում են խնդիրներ այն հաշվով, որ դրանք կան ընդհանրապես չեն տրամադրվում՝ հղում կատարելով քրեադատավարական օրենսդրության վրա, կամ էլ՝ նման թույլտվություն տրվում է, սակայն գործի նյութերի ծանոթացումը կատարվում է տվյալ պետական մարմնում: Հետևաբար, ինչպես ՀՀ քր. դատ. օրենսգրքում, այնպես էլ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ: Մեր խորին համոզմամբ՝ քրեադատավարական գործունեության ոլորտում Պաշտպանի պետք է օժտել խիստ որոշակի լիազորություններով, ինչը պետք է նախատակ հետապնդի ոչ թե փոխարինել քրեական գործի վարույթն իրականացնող մարմիններին (հետաքննության մարմին, քննիչ, դատախազ, դատարան), այլ լրացնել քրեադատավարական ոլորտում անձի իրավունքների պաշտպանության կառուցակարգերը:

ՈՒՍԱՏՄ ՄԱՍՈՒՐՅԱՆ

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ավագ մասնագետ, ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

«2007Թ.Ի ՖԻԼԻՊ ԶԵՍԱՓԻ ԱՆՎԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՐԻ ԴԱՏԱԽԱՂ» ՄՐՑՈՒՅԹ

Այսօր ամբողջ աշխարհում իրավաբանական կրթության զարգացման ուղղությամբ տարվող քաղաքականության կարևորագույն ուղղություններից է այսպես կոչվող ոչ ֆորմալ կրթությունը: Այս կրթության ամենատարբեր ձևերն ու մոտեցումները այսօր լայնորեն կիրառվում են աշխարհում և մեր կրթական համակարգը ևս փորձում է դրան անմասն չմնալ: Սակայն այս գործում մասնագիտական կազմակերպությունների դերը ևս խիստ կարևոր է. Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ջանքերի շնորհիվ Հայաստանում արդեն ավանդույթ է դարձել իրավաբան ուսանողների համար կազմակերպվող «Ֆիլիպ Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը:

Այս տարի մրցույթի ազգային մրցափուլը կազմակերպվեց յոթերորդ անգամ: Դատախաղ-մրցույթի այս տարվա բեման վերաբերում է պետությունների միջազգային կազմակերպություններին անդամակցությանը, անդամ և ոչ անդամ պետությունների միջև ծագած տարաձայնությունների լուծմանը: «2007թ.-ի Ֆիլիպ Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հաղթող ճանաչվեց Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի թիմը: Վերջինս այս տարի զարմանը կմեկնի Վաշինգտոն՝ մասնակցելու մրցույթի միջազգային մրցափուլին: Մրցույթի եզրափակչի ավարտից հետո կայացավ մրցանակաբաշխություն, որի ընթացքում մասնակիցներին և մրցանակակիրներին շնորհվեցին վկայականներ:

Մրցույթի եզրափակչին ներկա էին և ելույթով հանդես եկան «ԼԻԳԱ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության նախագահ, փաստաբան Կարեն Զաղոյանը, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության կապերի բաժնի ղեկավար Թոմաս Միքնայտը և եզրափակչի ժյուրիի անդամ, ՀՀ Արտաքին գործերի նախարարության աշխատակազմի ղեկավար Շահեն Ավագյանը:

Այս տարի մրցույթի համակազմակերպիչներն էին Հայաստանի իրավաբանական հիմնադրամը, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան ու «ԼԻԳԱ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը: Ազգային մրցափուլի հովանավորն էր Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը: Մրցույթի կազմակերպմանն այս տարի աջակցել էր ՀՀ Դատական ղեկարարամենտը:

ՐԱՅԱՍՏԱՆԻ ԶԵՍԱՓԻ ԱԿՈՒՄԲԸ

Մրցույթի կազմակերպման գործում իր գրեթե մեկամյա գործունեության ընթացքում կարևորագույն դերակատարում ունի Հայաստանի Զեսափի ակումբը: 2006թ. ապրիլի 7-ին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, միավորելով իր և Զեսափի մրցույթի բարեկամների ջանքերը, հիմնեց Հայաստանի Զեսափի ակումբը:

Ակումբի ստեղծումը նպատակ ունի մի կողմից նպաստել Հայաստանում «Ֆ.Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի մասնակցությանը, դրա կարևորության գիտակցմանը և Հայաստանում մրցույթի շարունակականությանն ապահովմանը, մյուս կողմից քննարկումների, կյոթ սեղանների, սեմինարների կազմակերպման միջոցով նպաստել Հայաստանում իրավաբան ուսանողների կողմից միջազգային իրավունքի յուրացմանը, այդ բնագավառում գիտելիքների կատարելագործմանը և ամրապնդմանը, իրավաբան ուսանողների հաղորդակցությանը իրավագիտության զարգացման միջազգային փորձին, խթանել այդ ոլորտում ինքնուրույն հետազոտությունների իրականացումը:

Ակումբի գործունեությանը կարող է մասնակցել յուրաքանչյուր ոք, ով մասնակցել է Զեսափի մրցույթին որպես դատավոր, դատավորի օգնական կամ մրցույթի մասնակից, հետաքրքրված է ակումբի նպատակներով և գործունեությամբ: Ներկայումս ակումբի մասնակիցներ են տարբեր պետական ու ոչ պետական մարմինների աշխատակիցներ, որոնք եղել են մրցույթի դատավորներ կամ հանդիսացել են մրցույթի հայաստանյան մրցափուլում հաղթող ճանաչված թիմերի անդամներ: Զեսափի ակումբի բնականոն գործունեությունն ապահովում են նրա երկու մարմինները՝ ակումբի խորհուրդը, որն համարվում է նրա խորհրդակցական մարմինը, և ակումբի համակարգողը:

Հայաստանի Զեսափի ակումբի պատվավոր անդամ է ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը: Պարոն Օսկանյանին ակումբի պատվավոր անդամի կոչում շնորհվեց 2006թ.-ի հուլիսի 10-ին ՀՀ Արտաքին գործերի նախարարությունում կայացած հանդիպման ժամանակ, որին մասնակցում էին ՀԵԻԱ-ի և Հայաստանի Զեսափի ակումբի մի խումբ անդամներ: Ունենալով որոշակի դիրքորոշում, որը ձևավորվել էր ակումբի շրջանակում կայացած «Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի հիմնախնդիրը միջազգային իրավունքի տեսանկյունից» խորագրով քննարկման ընթացքում՝ հանդիպման մասնակիցների հիմնական նպատակն էր նախարարի հետ գրուցել Հայաստանի արտաքին քաղաքականության, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման վերջին զարգացումների շուրջ Հայաստանի պաշտոնական դիրքորոշման, քննարկվող փաստաթղթի մանրամասների և հակամարտության լուծման գործընթացի հետագա հնարավոր զարգացումների մասին: Հանդիպման մասնակիցները նախնական համաձայնության եկան առաջիկայում ևս ունենալ հանդիպումներ՝ քննարկելու համար Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների, Հայաստանում ժողովրդավարության և իրավական պետության կայացման և մեր երկրի զարգացման համար կարևոր այլ թեմաներ:



ՈՉ ՖՈՐՄԱԿ ԿՐԹՈՒՅԹՈՒՆ

Արիզոնա նահանգի Մոխոլա օկրուգում օճառ գողացողը, որը մերկացվել է դրանում, որպես պատիժ պետք է օրենքի պահապանների ներկայությամբ լվացվի և շփվի այնքան ժամանակ, մինչև օճառն սպառվի և վերածվի փրփուրի:



Իլլինոյս նահանգի Օակ Պարկում աքաղաղները մինչև առավոտյան ժամը վեցը «ծուրդուղու» կանչելու իրավունք չունեն:

Միչիգանի նահանգում քանո դեմ թքելը համարվում է դատարանի կողմից դատապարտելի արարք:

Կալիֆորնիա, Այդահո և Հյուսիսային Դակոտա նահանգներում պատասխանատվության են ենթարկվում նրանք, ովքեր թռչուններ են բռնում գերեզմանատանը:

Կանգաս նահանգում բնակիչներն իրավունք չունեն գլխարկների վրա կրել ... մեղու:

Վայոմինգ նահանգում կարելի է նապաստակներին լուսանկարել միայն հունվարից մինչև ապրիլ և միայն իշխանությունների գրավոր թույլտվությամբ:

Ֆլորիդա նահանգում արգելված է գիշերները ... խոնփացնել:

Բոստոն քաղաքում արգելված է լողանալ ... կիրակի օրերին:

Լոս Անջելեսում միևնույն լոգարանում միաժամանակ երկու երեխաներ լողացնել չի կարելի:

Դատավոր - Ամբաստանյալ, ձեզ մեղադրում են երկկնության մեջ, սակայն ապացույցների անբավարարության հետևանքով դատարանը ձեզ անպարտ է ճանաչում: Դուք ազատ եք և կարող եք վերադառնալ ձեր կնոջ մոտ:
Ամբաստանյալ - Ո՞ր մեկի, պարոն դատավոր:

Որպես վկա հարցաքննված կինը դատավարությունն ավարտվելուց հետո վերադառնում է ու դատավորին հարցնում.

- Կարո՞ղ եմ որոշ անճշտություններ ուղղել իմ ցուցմունքներում:

- Իհարկե, ես ձեզ լսում եմ:

- Կանգնելով բարձր դատարանի առաջ ես այնպես էի հուզված, որ երբ դուք հարցրիք իմ տարիքը, ես սխալմամբ ասել եմ գոտկատեղիս չափը:

- Ամբաստանյալ, դուք ի՞նչ կասեք ի պաշտպանություն ձեզ:

- Պարոն դատավոր, ես ամենը եմ, և խնդրում եմ դա ի նկատի ունենաք իբրև հանցանքը մեղմացնող հանգամանք:

Շվեդ գործարար Լեյվ Ստենբերգը հաջողությամբ տարավ արհեստական սրտի տեղադրման վիրահատությունը և այժմ գտնվում է ... իրավաբանների հսկողության տակ: Բանն այն է, որ Ստենբերգին մեղադրանքներ են ներկայացված մեծ չափի հարկեր թաքցնելու համար: Այդ ուղղությամբ շվեդական օրենքները շատ խիստ են: Սակայն դրանցից ելնելով էլ, այն մարդը, որի սիրտը դադարել է բաբախել, համարվում է մահացած, իսկ Ստենբերգի սիրտը դադարեց բաբախել վիրահատական սեղանին:

ԱՄՆ-ի մի քանի նահանգների սահմաններ նույնիսկ անցնում են բնակելի տների վրայով: Դրա հետևանքով երբեմն ստեղծվում են հետաքրքիր իրադրություններ: Քանի որ տարբեր նահանգներում գործում են տարբեր օրենքներ, ակամա հարց է ծագում՝ բնակարանի տերը անշարժ գույքի հարկը որտե՞ղ պետք է վճարի, եթե բնակարանը գտնվում է երկու նահանգներում: Երկար դատողություններից հետո ֆեդերալ իշխանությունները կայացրել են մի որոշում, ըստ որի, պետք է հարկերը վճարել այն նահանգներում, ուր գտնվում է ննջասենյակը:

«Պատասխանողները թռչնաբուծարանում ձվից դուրս եկած ճտերին շաբաթ և մասամբ կիրակի օրերին կեր չեն տվել, քանի որ, ըստ իրենց ցուցմունքների, նրանք նշում էին իրենց ծննդյան օրը»:

(վճռից)

«Հարգելի փաստաբաններ, 2007թ.-ի փետրվարի 17-ին՝ ժամը 10:00-17:00 ABA/CEELI-ն կազմակերպում է վերապատրաստում «Մարդու իրավունքների պաշտպանություն և աջակցություն» թեմայով: Մեմբերները կունենան երկու սուրճի և լանչի ընդմիջում: Մեմբերին հնարավորություն կունենան մասնակցելու առաջին քսան գրանցված անձինք»:

(հայտարարությունից)

«Ինչ մնում է տունը բաժանելուն, ապա հայցվորն իրավունք չունի կովի մեկ երրորդի նկատմամբ»:

(վճռից)

«Մեղադրյալի վիճակում անմեղսունակություն չի հայտնաբերվել»:

(դատավճռից)

«Տուժողի դրամապանակը հանելը Խաչատրյանը արդարացնում է իր սպառվող համբերությամբ՝ չվճարվող պարտքի առթիվ»:

(դատավճռից)

«Ղուկասյանը օգտվել է իր իրավունքներից, բայց խուսափել է՝ դիմելով հիվանդանոցային թերթիկներին և օրգանիզմի այլ խորամանկությունների»:

(հայցադիմումից)

«Ձեր ընտանիքի կենցաղային պայմանները թույլ են տալիս ապրելու առանց մարտկոցի՝ պատուհանները փակելու և դուռը բացելու պայմանով»:

(հարցումի պատասխանից)

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99

Ֆաքս՝ (374 10) 58-02-99

Էլ.փոստ՝ legalnewsletter@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝
03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝
Նարինե Կարապետյան

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ» ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 500 օրինակ
Ծավալը՝ 1 տպ. մամուլ
Ստորագրված է տպագրության
01.03.2007թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից